

Կ-826-28.12.2020,26.02.2021-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Փախստականների եւ ապաստանի մասին» 2008 թվականի նոյեմբերի 27-ի ՀՕ-211-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 45-րդ հոդվածի 3-րդ մասում «Ժամկետի երկարաձգման հիմքեր» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենքի 47-րդ հոդվածի 2.1-ին մասում նախատեսված անձանց վերաբերյալ վարույթներով» բառերը:

Հոդված 2. Օրենքի 47-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 2.1-ին մասով.

«2.1. Այն օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը, ով ապօրինի հատել է Հայաստանի Հանրապետության պետական սահմանը, կամ ում նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվում Հայաստանի Հանրապետության տարածքում, կամ ով ենթակա է հանձնման օտարերկրյա պետությանը, կարող է դիմել ապաստան ստանալու կամ փախստականի կարգավիճակ ձեռք բերելու համար այդ իրավունքի մասին ժամուցման պահից՝ 15 օրվա ընթացքում:

Իրավասու մարմնի պաշտոնատար անձը՝ սույն մասում նշված անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու, նրան ազատությունից զրկելու կամ նրա ազատությունը այլ կերպ սահմանափակելու պահից սկսած՝ անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, պարզաբանում է ապաստան կամ փախստականի կարգավիճակ հայցելու նրա իրավունքը, որի վերաբերյալ նրան տալիս է գրավոր ժամուցագիր, եւ ապահովում է նրա իրավունքի իրացումը Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստանալու մասին նրա դիմումն ուղարկելով լիազոր մարմնին:»:

Հոդված 3. Օրենքի 52-րդ հոդվածի 8-րդ մասում «ուղարկվում է ապաստան հայցողին» բառերից հետո լրացնել « հայերեն եւ ապաստան հայցողին հասկանալի լեզվով, իսկ սույն օրենքի 47-րդ հոդվածի 2.1-ին մասում նախատեսված դեպքերում ներկայացված ապաստանի հայցերով կայացված որոշումն՝ անհապաղ, բայց ոչ ուշ, քան ընդունմանը հաջորդող աշխատանքային օրը» բառերը:

Հոդված 4. Օրենքի 57-րդ հոդվածի՝

1.1-ին մասում «դրա մասին տեղեկանալու օրվանից սկսած 30 օրվա ընթացքում» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենքի 47-րդ հոդվածի 2.1-ին մասով նախատեսված հայցերով կայացված բացասական որոշումների, որոնք ենթակա են բողոքարկման դրանց մասին տեղեկանալու օրվանից սկսած՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում» բառերը.

2. 3-րդ մասում «կարող է բողոք ներկայացնել դատարան» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենքի 47-րդ հոդվածի 2.1-ին մասով նախատեսված ապաստանի հայցերով կայացված բացասական որոշումների, որոնցով կարող է բողոք ներկայացվել բողոքարկման ժամկետը բաց թողնելու պատճառը (պատճառները) վերանալու օրվանից սկսած 10 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան ապաստանի հայցի առնչությամբ լիազոր մարմնի որոշման կայացման մասին իրազեկվելու օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում» բառերը:

Հոդված 5. Օրենքի 59-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 59. Ապաստան տրամադրելու երկրորդ դիմումը ներկայացնելը

1. Ապաստան տրամադրելու երկրորդ դիմումը կարող է ներկայացվել ապաստան տրամադրելու առաջին դիմումի վերաբերյալ վերջնական բացասական որոշման կամ ապաստան տրամադրելու գործընթացը կարճելու մասին որոշման արկայության դեպքում: Նման դեպքերում ապաստան հայցողն օգտվում է բոլոր այն իրավունքներից, որոնք նախատեսված են առաջին անգամ ապաստան հայցողների համար, այդ թվում՝ սույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավունքից:

2. Լիազոր մարմինը երկրորդ դիմումը ստանալուց հետո հարցազրույց է անցկացնում դիմումատուի հետ:

3. Լիազոր մարմինը երկրորդ դիմումի հիման վրա ապաստանի հայցի քննությունն իրականացնում է հետևյալ պայմաններից որեւէ մեկի առկայության դեպքում.

1) առաջացել են հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղի առնչությամբ կամ սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պատճառներով նոր հանգամանքներ,

2) ապաստան հայցողը ներկայացրել է նոր ապացույցներ, որոնք հիմնավոր պատճառներով չեն ներկայացվել առաջին դիմումի քննության ընթացքում:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված պայմանների բացակայության դեպքում լիազոր մարմինը կայացնում է դիմումն առանց քննության թողնելու մասին որոշում:

5. Դիմումն առանց քննության թողնելու մասին լիազոր մարմնի որոշումը ենթակա է բողոքարկման դրա մասին ծանուցվելու օրվանից սկսած 30 օրվա ընթացքում, իսկ սույն օրենքի 47-րդ հոդվածի 2.1-ին մասով նախատեսված դեպքերում՝ ծանուցվելու օրվանից սկսած 15 օրվա ընթացքում:

6. Սույն հոդվածի 3-րդ մասի դրույթները չեն կիրառվում այն դեպքերում, երբ Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ստացած անձի կամ ապաստանի միասնական դիմում ներկայացրած եւ վերջնական որոշմամբ մերժված անձի ընտանիքի անդամը (խնամքի տակ գտնվող անձը) անհատական ապաստանի դիմում է ներկայացնում:»:

Հոդված 6.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող իննսուներորդ օրը:

2. Սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված իրավանորմերը տարածվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ներկայացված ապաստան տրամադրելու երկրորդ դիմումներով վարույթների նկատմամբ:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՓԱՒՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Փախստականների եւ ապաստանի մասին» 2008 թվականի նոյեմբերի 27-ի ՀՕ-211-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 45-րդ հոդվածի 3-րդ մասում «Ժամկետի երկարաձգման հիմքեր» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենքի 47-րդ հոդվածի 2.1-ին մասում նախատեսված անձանց վերաբերյալ վարույթներով» բառերը:

Հոդված 2. Օրենքի 47-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.1-ին մասով.

«2.1. Այն օտարերկրյա քաղաքացին օտարերկրացին կամ քաղաքացիություն չունեցող անձը, ով ապօրինի հատել է Հայաստանի Հանրապետության պետական սահմանը, կամ ում նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվում Հայաստանի Հանրապետության տարածքում, կամ ով ենթակա է հանձնման օտարերկրյա պետությանը, կարող է դիմել ապաստան ստանալու կամ փախստականի կարգավիճակ ձեռք բերելու համար այդ իրավունքի մասին ծանուցման պահից՝ 15 օրվա ընթացքում:

~~Սույն մասում նշված անձանց նկատմամբ քրեական հետապնդում իրականացնող կամ այլ իրավասու մարմնի, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում՝ Սահմանապահ զորքերի, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքում՝ Ռստիկանության եւ լիազոր մարմնի պաշտոնատար անձը՝ սույն մասում նշված անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու, նրան ազատությունից զրկելու, այդ թվում՝ բերման ենթարկելու, ձերբակալելու կամ նրա ազատությունը այլ կերպ սահմանափակելու պահից սկսած՝ անհապաղ, բայց ոչ ուշ քան 24 ժամվա ընթացքում, պարզաբանում է ապաստանի կամ փախստականի կարգավիճակ ~~ձեռք բերելու համար դիմելու վերջիններիս հայցելու նրա~~ իրավունքը, որի վերաբերյալ նրան տալիս տրվում է գրավոր ծանուցագիր, եւ ապահովում է նրանց իրավունքի իրացումը՝ Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստանալու մասին նրանց դիմումները տրամադրելով լիազոր մարմնին ~~ուղարկելու միջոցով~~»:~~

Հոդված 3. Օրենքի 52-րդ հոդվածի 8-րդ մասում «ուղարկվում է ապաստան հայցողին» բառերից հետո լրացնել «՝ հայերեն եւ ապաստան հայցողին հասկանալի լեզվով, իսկ սույն օրենքի 47-րդ հոդվածի 2.1-ին մասում նախատեսված դեպքերում ներկայացված ապաստանի հայցերով կայացված որոշումն՝ անհապաղ, բայց ոչ ուշ քան ընդունմանը հաջորդող աշխատանքային օրը» բառերը:

Հոդված 4. Օրենքի 57-րդ հոդվածի՝

1.1-ին մասում «դրա մասին տեղեկանալու օրվանից սկսած 30 օրվա ընթացքում» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենքի 47-րդ հոդվածի 2.1-ին մասով նախատեսված հայցերով կայացված բացասական որոշումների, որոնք ենթակա են բողոքարկման դրանց մասին տեղեկանալու օրվանից սկսած՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում» բառերը.

2. 3-րդ մասում «կարող է բողոք ներկայացնել դատարան» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենքի 47-րդ հոդվածի 2.1-ին մասով նախատեսված ապաստանի հայցերով կայացված բացասական որոշումների, որոնցով կարող է բողոք ներկայացվել բողոքարկման ժամկետը բաց թողնելու պատճառը (պատճառները) վերանալու օրվանից սկսած 10 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան ապաստանի հայցի առնչությամբ լիազոր մարմնի որոշման կայացման մասին իրազեկվելու օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում» բառերը:

Հոդված 5. Օրենքի 59-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 59. Ապաստան տրամադրելու դիմումը կրկնակի ներկայացնելը**

1. Ապաստան տրամադրելու երկրորդ դիմումը կարող է ներկայացվել ապաստան տրամադրելու առաջին դիմումի վերաբերյալ վերջնական բացասական որոշման կամ ապաստան տրամադրելու

գործընթացը կարճելու մասին որոշման առկայության դեպքում: Նման դեպքերում ապաստան հայցողն օգտվում է բոլոր այն իրավունքներից, որոնք նախատեսված են առաջին անգամ ապաստան հայցողների համար, այդ թվում՝ սույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավունքից:

2. Լիազոր մարմինը երկրորդ դիմումը ստանալուց հետո հարցազրույց է անցկացնում դիմումատուի հետ:

3. Լիազոր մարմինը երկրորդ դիմումի հիման վրա ապաստանի հայցի քննությունն իրականացնում է հետևյալ պայմաններից որեւէ մեկի առկայության դեպքում.

1) առաջացել են հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղի առնչությամբ կամ սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պատճառներով նոր հանգամանքներ,

2) ապաստան հայցողը ներկայացրել է նոր ապացույցներ, որոնք հիմնավոր պատճառներով չեն ներկայացվել առաջին դիմումի քննության ընթացքում:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված պայմանների բացակայության դեպքում լիազոր մարմինը կայացնում է դիմումն առանց քննության թողնելու մասին որոշում:

5. Դիմումն առանց քննության թողնելու մասին լիազոր մարմնի որոշումը ենթակա է բողոքարկման դրա մասին ծանուցվելու օրվանից սկսած 30 օրվա ընթացքում, իսկ սույն օրենքի 47-րդ հոդվածի 2.1-ին մասով նախատեսված դեպքերում՝ ծանուցվելու օրվանից սկսած 15 օրվա ընթացքում:

6. Սույն հոդվածի 3-րդ մասի դրույթները չեն կիրառվում այն դեպքերում, երբ Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ստացած անձի կամ ապաստանի միասնական դիմում ներկայացրած եւ վերջնական որոշմամբ մերժված անձի ընտանիքի անդամը (խնամքի տակ գտնվող անձը) անհատական ապաստանի դիմում է ներկայացնում:»:

Հոդված 6.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող իննսուներորդ օրը:

2. Սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված իրավանորմերը տարածվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ներկայացված ապաստան տրամադրելու երկրորդ դիմումներով վարույթների նկատմամբ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՍԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՓԱՆՍԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍԱՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԶԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-826-28.12.2020,26.02.2021-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական գեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ՓԱՆՍԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍԱՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1.	<i>ՀՀ կառավարություն</i>	Նախագծի վերնագիր	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները՝ Նախագծի վերնագրում «Փախստականների և ապաստանի մասին» բառերից հետո նշված «Հայաստանի Հանրապետության» բառերն անհրաժեշտ է հանել:	Ընդունվել և խմբագրվել է	Ընդունվել է:
2.	<i>ՀՀ կառավարություն</i>	Նախագծի 2-րդ հոդված /47-րդ հոդվածի 2.1 մաս 1-ին պարբ./	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները՝ Նախագծի 2-րդ հոդվածով «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 47-րդ հոդվածում լրացվող նոր 2.1-ին մասի համարն անհրաժեշտ է տեքստից	Ընդունվել և խմբագրվել է:	Ընդունվել է:

			առանձնացնել միջակետով:		
3.	<i>ՀՀ կառավարություն</i>	Նախագծի 2-րդ հոդված /47-րդ հոդվածի 2.1-ին մասի 1-ին պարբ./	Առաջարկվում է «օտարերկրացի» բառը փոխարինել «օտարերկրյա քաղաքացի» բառերով:	Ընդունվել և խմբագրվել է:	Ընդունվել է:
4.	<i>ՀՀ կառավարություն</i>	Նախագծի 2-րդ հոդված /47-րդ հոդվածի 2.1-ին մասի 2-րդ պարբ./	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «Իրավասու մարմնի պաշտոնատար անձը՝ սույն մասում նված անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու, նրան ազատությունից զրկելու կամ նրա ազատությունը այլ կերպ սահմանափակելու պահից սկսած անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, պարզաբանում է ապաստան կամ փախստականի կարգավիճակ հայցելու նրա իրավունքը, որի վերաբերյալ նրան տալիս է գրավոր ծանուցագիր, եւապահովում է նրա իրավունքի իրացումը՝ Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստանալու մասին նրա դիմումն ուղարկելով լիազոր մարմնին»: Տվյալ առաջակը կատարվել է, որպեսզի լրացուցիչ պարտականություններ չդրվեն քննիչների վրա:	Ընդունվել և խմբագրվել է:	Ընդունվել է:

5.	<i>ՀՀ կառավարություն</i>	Նախագծի 4-րդ հոդված /57-րդ հոդվածի 1 մաս/	Առաջարկվում է »10 օրվա» բառերը փոխարինվել է «10 աշխատանքային օրվա» բառերով:	Ընդունվել և խմբագրվել է:	Ընդունվել է:
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՎԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1.	<i>ՀՀ կառավարություն</i>	Նախագծի 1-ին հոդված /31.6 գլուխ/	Նախագծի 31.6 գլխի վերնագիրը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «Հայաստանի Հանրապետության պետական սահմանն ապօրինի հատած կամ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական հենտապնդման կամ օտարերկրյա պետությանը հանձնման ենթակա օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձանց կողմից փախստականի կարգավիճակ կամ ապաստան տրամադրելու հայցով իրավասու մարմինների կողմից կայացված անբարենպաստ վարչական ակտը վիճարկելու կամ բարենպաստ վարչական ակտ կայացնելու վերաբերյալ գործերը»:	Ընդունվել և խմբագրվել է:	Ընդունվել է:
2.	<i>ՀՀ կառավարություն</i>	Նախագծի 1-ին հոդված /222.17-րդ հոդված/	Նախագծի 1-ին հոդվածով Օրենսգրքում լրացվող 222.17-րդ հոդվածի վերնագիրը անհրաժեշտ է համապատասխանեցվել է 31.6 գլխի վերնագրին:	Ընդունվել և խմբագրվել է:	Ընդունվել է:

3.	<i>ՀՀ կառավարություն</i>	Նախագծի 1-ին հոդված /222.17-րդ հոդված/	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի կարգավորումները՝ Նախագծի 1-ին հոդվածով Օրենսգրքում լրացվող նոր 222.17-րդ հոդվածի վերնագիրն անհրաժեշտ է համապատասխանեցնել Նախագծի 1-ին հոդվածով Օրենսգրքում լրացվող նոր 222.17-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված կարգավորման բովանդակությանը:	Ընդունվել և խմբագրվել է:	Ընդունվել է:
4.	<i>ՀՀ կառավարություն</i>	Նախագծի 1-ին հոդված /222.18-րդ հոդված 1-ին մաս/	Նախագծում «հայցադիմում» բառն անհրաժեշտ է փոխարինել «դիմում» բառով՝ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ բաժնում ամրագրված կարգավորումները:	Ընդունվել և խմբագրվել է:	Ընդունվել է:
5.	<i>ՀՀ կառավարություն</i>	Նախագծի 1-ին հոդված /222.18-րդ հոդված 1-ին մաս/	Նախագծի 1-ին հոդվածով Օրենսգրքում լրացվող 222.18-րդ հոդվածի 1-ին մասում «15 օրվա» բառերը փոխարինել «10 աշխատանքային օրվա» բառերով:	Ընդունվել և խմբագրվել է:	Ընդունվել է:
6.	<i>ՀՀ կառավարություն</i>	Նախագծի 1-ին հոդված /222.19-րդ հոդվածի վերնագիր/	Նախագծի 1-ին հոդվածով Օրենսգրքում լրացվող 222.19-րդ հոդվածի վերնագրից հանել «և վճարել» բառերը:	Ընդունվել և խմբագրվել է:	Ընդունվել է:

7.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված /222.19-րդ հոդված 4-րդ մաս/	Նախագծի 1-ին հոդվածով Օրենսգրքում լրացվող 222.19-րդ հոդվածում ավելացնել նոր 4-րդ մաս, որում նշված կլինի, թե վերաքննիչ դատարանը ինչ դատական ակտ է կայացնում: Առաջարկվում է 222.19-րդ հոդված 4-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «Վարչական դատարանի ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով անփոփոխ, կամ բավարարում է վերաքննիչ բողոքը՝ բեկանելով վարչական դատարանի դատական ակտը և կայացնելով նոր դատական ակտ:»	Ընդունվել և խմբագրվել է:	
8.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված /222.19-րդ հոդված 5-րդ մաս/	Նախագծի 1-ին հոդվածով Օրենսգրքում լրացվող 222.19-րդ հոդվածի նախկին 4-րդ մասը լրամշակել և սահմանել, որ վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտը ենթակա չէ բողոքարկման, իսկ նույն հոդվածի նախկին 5-րդ մասը ամբողջությամբ հանել նախագծից:	Ընդունվել և խմբագրվել է:	